

Հաստատված էամբիոնի " " -ի նիստում

(արձ. թիվ) ամբիոնի պետ՝

.....

(ամիս ամսաթիվ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Իրավաբանական հոգեբանություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		ՀՀ ոստ. կրթահամալիրի ակադեմիա
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		իրավաբան
ԱՄԲԻՈՆ		Հասարակագիտական առարկաների և հոգեբանության mariamkarapetyanpsy@gmail.com
<ul style="list-style-type: none">▪ մասնաշենք/սենյակ▪ հեռախոս▪ էլ հասցե▪ Web կայքի հասցե		
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ոստիկանության կապիտան, Մ.Ե.Կարապետյան
ՈՒՄ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2017-2018 ուս. տարվա 2-րդ

ԿՐԵԴԻՏՆԵՐ

<p>ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ</p>	<p>Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 32 ժամ, որից 20 ժամ դասխոսություն, 12 ժամ սեմինար: Դասընթացն ավարտվում է ամփոփիչ ստուգադրքով:</p>
<p>ՆԱԽԱԴԱՅՄԱՆ</p>	<p>Չկա</p>
<p>ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բաժինների տեսքով՝</p> <ul style="list-style-type: none"> • Իրավաբանական հոգեբանությունը իրավագիտության և հոգեբանության համակարգում, իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, սկզբունքները այլ գիտությունների հետ • հոգեկանն գործընթացների դերը և նշանակությունը իրավաբանական գործունեության մեջ • անձի բազմակողմանի ուսումնասիրման մեթոդները և գործունեությունը • հաղորդակցման հնարների օգտագործման դերը իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ • սոցիալական խմբերի դերը և նշանակության ուսումնասիրումը, որպես անձի ձևավորման պայման • շեղվող վարքագծի զարգացման պատճառները, առանձնահատկությունները և իրավագիտակցման հասկացության ուսումնասիրումը • տուժողի, անչափահասի հոգեբանական առանձնահատկությունները • դատապարտյալի հոգեբանությունը, ռեսուրսային զարգացիայի գործունեությունը և խնդիրները, դատապարտյալի անձը և դաստիարակչական գործընթացը:
<p>ՆԴԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐՆԵՐ</p>	<p>Դասընթացի հիմնական նպատակն է իրավաբանական կրթություն ուսումնասիրող ուսանողների մոտ ձևավորել հոգեբանական հիմնական գիտելիքներ, որոնց կիրառումը պետք կգա հետագա գործունեության մեջ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողների կողմից հոգեբանական գիտելիքների համակարգի յուրացումը առանձին մարդու, ինչպես նաև խմբերի և կոլեկտիվների ձևավորման և հոգեկան գործունեության օրինաչափությունների ուսումնասիրումը • ստացված հոգեբանական գիտելիքների և հմտությունների, կարողությունների զարգացում առաջացած մասնագիտական խնդիրները լուծելու համար: • սոցիալական վարքի շեղումների հոգեբանական և քրեաբանական պատճառների և պայմանների ուսումնասիրումը:

<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Իմանա</p> <p>2. Կարողանա</p> <p>3. Տիրապետի</p>		<p>Սովորողները պետք է իմանան`</p> <ul style="list-style-type: none"> • մարդու և խմբի ձևավորման ու գործունեության հոգեբանական օրինաչափությունները, անձի հոգեբանական կառուցվածքը, կոմունիկատիվ /հաղորդակցական/ գործընթացի առանձնահատկությունները • շեղվող վարքագծի ձևավորման պատճառները և առանձնահատկությունները • սոցիալական խմբերի դերի և նշանակության մասին անձի ձևավորման գործընթացում • Տուժողի, անչափահասի հոգեբանության առանձնահատկությունները, դատապարտյալի անձի հոգեբանությունը <p>Սովորողները պետք է կարողանան`</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրել և հաշվառել անձնավորության անհատական հոգեբանական առանձնահատկությունները • հոգեբանական շփում հաստատել տարբեր կատեգորիաների անձանց հետ • հասկանալ իրավախախտի անձի ձևավորման վրա ազդող հոգեբանական պատճառներն ու պայմանները <p>Սովորողները պետք է հմտանան`</p> <ul style="list-style-type: none"> • Մասնագիտական-հոգեբանական գիտելիքներին` անձի, խմբերի հոգեբանությանը, անձի հանցավոր վարքագծի ձևավորման պատճառներին • Հիմք վերցնելով հոգեբանական գիտելիքները տիրապետի վերլուծական հմտություններին, որպեսզի ապագայում կարողանա հմտորեն վերլուծել, ճիշտ գնահատել իր դերը և ազդեցությունը գործունեության վրա և մասնագիտական որշումներ կայացման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		<ol style="list-style-type: none"> 1. Ա.Ա.Նալչաջյան «Հոգեբանության հիմունքներ», Ե. 1997թ 2. Ա.Ա. Նալչաջյան «Սոցիալական հոգեբանություն» Ե.2004թ 3. Ս.Արզումանյան, Է. Գրին «Իրավաբանական հոգեբանություն», Ե. 2004թ 4. А.Г. Маклаков «Общая психология» Питер, 2008 5. Р.С. Немов «Общая психология, введение в психологию» М., 2016 6. А. М. Столяренко «Прикладная юридическая психология » М. ,2001

		<p>7. В.Л. Ваиильев «Юридическая психология» М., 1997</p> <p>8. В.Л. Ваиильев «Юридическая психология» М., 1998</p> <p>9. А.П. Самонов «Пиихология приттупника групп» Пермь, 1991</p> <p>10. Е. П. Ильин «Психология общения и межличностных отношени» —Питер, 2009 г.</p> <p>11. А.Г. Асмолов «Психология личности» —М. 1990</p> <p>12. В.С. Мухина, А.А. Хвостов «Возростная психология»—М.2005</p> <p>13. А.В. Хомич «Пиихология девиантного поведения » —Ростов-на –Дону 2006</p> <p>14. Л.Б. Шнайдер «Пиихология аддективного поведения детеи подростков»</p> <p>15. Ю. А. Дмитриев, Б.Б. Казак «Пенициарная психология » —Ростов-на –Дону 2007</p> <p>16. А. М. Столяренко «Прикладная юридическая пиихология » М. ,2001 г.</p>			
Լրացուցիչ		<p>1. Ս.Արզումանյան, Ս.Մկրտոչյան, Վ. Սարգսյան «Իրավաբանական հոգեբանությանն պրակտիկում», Ե. 2002 թ</p>			
ԳՆԱՅԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1- ամփոփիչ ստուգարք			
ԳՆԱՅԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		<p>Գնահատման բազմագործոն համակարգ</p>	<p>Գնահատականի թվային համարժեքը</p>	<p>ԿՓԵՅ / տառային գնահատական</p>	<p>Ուսանողների գիտելիքների բնութագիր</p>
100-97		4.0	A		Անցողիկ գնահատականներ
96 - 90		3, 7			
89 - 85		3, 3	B		
84 - 80		3, 0			
79 - 70		2.7	C		
69 - 65		2.3	D		
64 - 60		2.0	E		

	59 - 41	1.7	FX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ		
	40-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ		
	100-60	4.0-2.0	S	Անցողիկ գնահատականներ	մյուրեւստո	
	59 - 41	1.7	UX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ		
	40-ից ցածր		U	ԱՆԲԱՎԱՐԱՐ`		
ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻՉՄԱՆԵՐ	Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմության և առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի ու տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխանությունների հիման վրա: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց կա արժեքային տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջները շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% կատարելու դեպքում:					
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Ներկայություն	Դասապլանի որևէ փոփոխությունն ախտորոշ կտեղեկացվի ուսանողին:					
Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվել: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավորով:					
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք կապիտալ ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքի օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:					

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

Թեմա 1	
<p>Իրավաբանական հոգեբանությունը իրավագիտության և հեգեբանության համակարգում, իրավաբանական հոգեբանության առարկան, խնդիրները, հիմնական սկզբունքները, կապը այլ գիտությունների հետ</p> <p>(2 ժամ դասախոսություն)</p>	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Իրավաբանական հոգեբանությունը և ուսումնասիրման առարկան:</p> <p>2. Իրավաբանական հոգեբանության խնդիրները:</p> <p>3. Հոգեբանական հասկացություններն ու կատեգորիաները:</p> <p>4. Իրավաբանական հոգեբանությունը հոգեբանական և իրավաբանական գիտությունների համակարգում:</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:</p>

Թեմա 2	
<p>Հոգեկան գործընթացների դերը և նշանակությունը իրավաբանական գործունեության մեջ</p> <p>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)</p>	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Զգայություններ: Զգայությունը որպես արտացոլման պարզագույն ձև:</p> <p>Զգայության տեսակները, օրինաչափությունները և տեսակները: Զգայություն և զգայարան:</p> <p>2. Ընկալում: Ընկալման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Ընկալման հատկությունները՝ առարկայություն,</p>	<p>Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն, դասախոսության ընթացքում օգտագործվում են դիդակտիկ կյուբեր՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:</p> <p>Ուսանողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:</p>

<p>ինաստավորվածություն, ամբողջականություն, կառուցվածքայնություն, ընդհանրացվածություն, ապերցեպցիա:</p> <p>3. Հիշողություն: Հիշողության տեսակները՝ ըստ կամքի մասնակցության և ըստ գերակայող զգայարանի: Խոսքային - տրամաբանական, հուզական, զննական - պատկերավոր, շարժողական, հիշողություն: Հիշողության գործընթացները: Մտապահման հնարները:</p> <p>4. Մտածողություն: Մտածողության տեսակները: Մտածողության գործընթացները</p> <p>5. Ուշադրություն: Ուշադրության տեսակները՝ ներքին և արտաքին, կամաժին, ոչ կամաժին և հետկամաժին: Ուշադրության հատկությունները:</p> <p>6. Երևակայություն: Երևակայության տեսակները՝ ստեղծագործական, վերաստեղծող /իրագործող/: Ֆանտազիան որպես երևակայության տեսակ: Երևակայության կապը այլ գործընթացների հետ:</p> <p>7. Հուզական հոգեկան գործընթացներ: Հույզերի և զգացմունքների տեսակներն ու ընդհանուր բնութագիրը:</p> <p>8. Կամային հոգեկան գործընթացներ: Հասկացություն կամքի մասին: Անձի կամային զօժեր: Դրդապատճառներ, ցանկություններ</p>	
---	--

Թեմա 3

Հոգեկան հատկությունների բնութագիրը և կիրառման նշանակությունը իրավաբանական գործունեության մեջ:

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Խառնվածք, խառնվածքի տիպաբանություն՝ սանգվինիկ, խոլերիկ մելանխոլիկ, ֆլեգմատիկ: Էքստրավերտներ և ինտրովերտներ: Խառնվածքի հատկությունները:</p> <p>2. Բնավորություն: Բնավորության կիրառական նշանակությունը : Բնավորության տիպերի նկարագիրը:</p> <p>3. Ընդունակություններ: Ժառանգական և ձեռքբերովի ընդունակություններ: Մասնագիտական ընդունակություններ: Ընդունակությունների և գիտելիքների կապը:</p> <p>4. Անձի ուղղվածությունը /արժեքային կողմնորոշումը/: Անձի պահանջմունքներ, դրդապատճառներ, արժեքներ: Պահանջմունքներն ու դրդապատճառները իրավաբանի գործունեության մեջ :</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով և դիդակտիկ նյութերի օգտագործման միջոցով:</p> <p>Հարցեր 1–4 սեմինար-պարապմունք խնդրահարույց հարցերի քննարկում:</p> <p>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</p>

Թեմա 4 Անձի բազմակողմանի ուսումնասիրության մեթոդներ: (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ինչ հատկություններ պետք է ունենա անհատը՝ անձ կոչվելու համար: Ինչ է անձի անհատականությունը:</p> <p>2. Անձի զարգացման փուլերը</p> <p>3. Վիզուալ հոգեդիագնոստիկա /հոգեախտորոշում՝ Մարմնակազմական ախտորոշում /Է. Կրեչմեր/: Մարդու միմիկայի վերլուծություն:</p> <p>4. Անձի ուսումնասիրման պրոյեկտիվ մեթոդներ:</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն դիդակտիկ նյութերի կիրառմամբ և քննարկվում են հետքըքրություն առաջացնող հացերը խնդրո վերաբերյալ :</p>

Թեմա 5	
Հաղորդակցումը իրավաբանի պրոֆեսիոնալ գործունեության մեջ (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Հաղորդակցման դերը և նշանակությունը իրավաբանի պրակտիկ գործունեության մեջ, հաղորդակցման բնութագիրը</p> <p>2. Ակտիվ ուսուցողական միջոցները:</p> <p>3. Վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցների կիրառումը</p>	<p>Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով և ցուցադրվում են համապատասխան դիդակտիկ նյութեր:</p> <p>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ ընկալելու քննարկվող հարցերի բովանդակությունը:</p> <p>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:</p>
Թեմա 6	
Սոցիալական խմբերի դերը և նշանակությունը, որպես անձի վարքի ձևավորման պայման (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Սոցիալական խմբերի՝ մեծ, միջին և փոքր խմբեր: Սոցիալական խմբի կառուցվածքը: Ձևական, կիսաձևական, ոչ ձևական խմբեր: Պրիմիտիվ խումբ:</p> <p>2. Ինքնագործունեության խմբեր: Ազդեցիվ, էպատաժային, այլընտրանքային ինքնագործունեություն:</p> <p>3. Արտախմբային վարքի սուբյեկտները, դրանց հոգեբանական նկարագիրը:</p> <p>4. Հանցավոր խմբերի ազդեցությունը անի վարքագծի վրա:</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն դիդակտիկ նյութերի կիրառմամբ:</p> <p>Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:</p>

Թեմա 7	
Շեղվող վարքագծի զարգացման պատճառները և առանձնահատկությունները	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Շեղվող վարքագծի ուսումնասիրման հիմնական մեթոդները և ուղղվածությունները 2. Չափանիշի հասկացությունը շեղվող վարքագծի հզեբանության մեջ:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Անցկացվում է սեմինար պարապմունք ներկայացված խնդրո վերաբերյալ:

Թեմա 8	
Տուժողի հոգեբանության առանձնահատկությունները	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1.Տուժողի հոգեբանական առանհատկությունները 2.Տուժողի անձի առանձնահատկությունները	Հարցեր 1-2 - Դասախոսություն` ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով:

Թեմա 9	
Անչափահասի հոգեբանության առանձնահատկությունները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1.Վաղ մանկության հոգեբանական առանձնահատկությունները:</p> <p>2.Մանկության շրջանի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը:</p> <p>3.Մանկության ավարտի հոգեբանական առանձնահատկությունները:</p> <p>4.Դեռահասության տարիքի առանձնահատկությունները և բարդությունները:</p>	<p>Անցկացվում է դասախոսություն քննարկում, դիդակտիկ կյուբերի կիրառմամբ:</p> <p>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</p> <p>Հարցեր 1-4 անցկացվում է սեմինար պարապմունք՝ հոգեբանական դերային խաղերի միջոցով քննարկվում են խնդրահարույց հարցերը:</p>

Թեմա 10	
Դատապարտյալի հոգեբանությունը, ռեսուրսային գործոնները ու խնդիրները, դատապարտյալի անձը և դատական գործընթացը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Դատապարտյալի անձի հոգեբանությունը:</p> <p>2. Դատապարտյալի անձի ադապտացիան:</p> <p>3. Ռեսուրսային գործոնները և խնդիրները:</p>	<p>Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող հարցերի վերաբերյալ գրականությանը և վերհանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման:</p> <p>Անցկացվում է սեմինար պարապմունք 1-3 հարցերի շուրջ, անցած թեմաների ամփոփում:</p>

